

Տեղեկատվություն

Առավել իրատեսական մարզային ներդրումային 11 ծրագրերի վերաբերյալ

2017 թվականի փետրվարի 21-ին ՀՀ վարչապետի մոտ քննարկվել են ստորև ներկայացվող առավել իրատեսական թվով 11 մարզային ներդրումային ծրագրեր՝ ներդրողների մասնակցությամբ.

1. **ՀՀ Լոռու մարզի** Ամրակից համայնք, «Ֆերմերային տնտեսության զարգացում»
2. **ՀՀ Լոռու մարզի** Վանաձոր համայնք, ««Ռոգֆոուդ» արտադրամասի ընդլայնում»
3. **ՀՀ Տավուշի մարզի** Իջևան համայնք, «Ժամականակից տեխնոլոգիաներով բազմաբերք ելակի արտադրություն»
4. **ՀՀ Գեղարքունիքի մարզի** Վարդենիս համայնք, «Շինչիլաբուծության տոհմային տնտեսություն»
5. **ՀՀ Գեղարքունիքի մարզի** Ակունք համայնք, «Վարդենիսի պանրի գործարան՝ տարածաշրջանի զարգացման լոկոմոտիվ»
6. **ՀՀ Շիրակի մարզի** Գյումրի համայնք, «Խելացի տուն համակարգի արտադրություն»
7. **ՀՀ Շիրակի մարզի** Գյումրի համայնք, «Բասեն հյուրանոցային համալիրի, առևտրի կենտրոնի կառուցում և հանրային սննդի կազմակերպում»
8. **ՀՀ Արագածոտնի մարզի** Ոսկևազ համայնք, ««Ոսկեվազ» գինու գործարանի ընդլայնում և զբոսաշրջության նոր ուղղությունների զարգացում»
9. **ՀՀ Արագածոտնի մարզի** Աշտարակ համայնք, «Մետաղի հղկումից և մշակումից պատրաստվող իրերի արտադրության հիմնում»
10. **ՀՀ Արագածոտնի մարզի** Սաղմոսավան համայնք, «Էկոտուրիզմի և հանգստյան գոտու հիմնում՝ «Էկոմյունիթի»»
11. **ՀՀ Արարատի մարզի** Մասիս համայնք, «Սպանդանոցի ընդլայնում և թափոնների վերամշակման հոսքազծի կառուցում»

Քննարկման արդյունքներով տրված հանձնարարականների համաձայն՝ արդեն իսկ 2 ծրագրեր ֆինանսավորվել են.

1. **ՀՀ Լոռու մարզի** «Ֆերմերային տնտեսության զարգացում» ներդրումային ծրագրով ակնկալվող 35,0 մլն ՀՀ դրամ գումարից 14.03.2017թ-ին տրամադրվել է վարկի 1-ին փուլը՝ 20,0 մլն ՀՀ դրամ գումարի չափով՝ տարեկան 12% տոկոսադրույքով: Վարկի

առաջին փուլի ծախսման հիմնավորումները ներկայացնելուց և մոնիթորինգ իրականացնելուց հետո կտրամադրվի վարկի 2-րդ փուլը՝ 15,0 մլն ՀՀ դրամ գումարի չափով:

2. **ՀՀ Տավուշի մարզի** «Ժամականակից տեխնոլոգիաներով բազմաբերք ելակի արտադրություն» ծրագրով ակնկալվող 10,0 մլն դրամ վարկային միջոցները տրամադրվել են տարեկան 10% տոկոսադրույքով՝ 14.03.2017թ-ին կնքված պայմանագրի հիման վրա:

Դրա հետ մեկտեղ՝

1. **ՀՀ Արագածոտնի մարզի** «Մետաղի հղկումից և մշակումից պատրաստվող իրերի արտադրության հիմնում» ներդրումային ծրագրով ակնկալվող 15,0 մլն ՀՀ դրամ գումարից 2017 թվականի ապրիլ ամսվա 3-րդ տասնօրյակում նախատեսվում է 5,0 մլն ՀՀ դրամը տարեկան 4% տոկոսադրույքով տրամադրել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Սիրիահայերի աջակցության ծրագրի շրջանակներում, իսկ 10 մլն ՀՀ դրամը՝ ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ վարկավորման հաշվին՝ տարեկան 11% տոկոսադրույքով:

2. **ՀՀ Արագածոտնի մարզի** ««Ոսկեվազ» գինու գործարանի ընդլայնում և զբոսաշրջության նոր ուղղությունների զարգացում» ներդրումային ծրագրով ակնկալվող 300,0 մլն ՀՀ դրամը նախատեսվում է տրամադրել տարեկան 12% տոկոսադրույքով և 3% սուբսիդավորմամբ (վարկի առաջին 2 տարվա համար):

3. **ՀՀ Շիրակի մարզի** «Բասեն հյուրանոցային համալիրի, առևտրի կենտրոնի կառուցում և հանրային սննդի կազմակերպում» ծրագրի իրագործման նպատակով՝ ներկայումս ընթանում են «Բասենի Գոլք» ՍՊԸ-ին անհատույց սեփականության իրավունքով Գյումրի քաղաքի նախկին Շիրակ հյուրանոցի շինության և հողամասի նվիրատվության գործընթացները:

4. **ՀՀ Արագածոտնի մարզի** «Էկոտուրիզմի և հանգստյան գոտու հիմնում՝ «Էկոմյունիթի»» ծրագրի իրագործման նպատակով՝ ներկայումս ընթանում են էկոթաղամասի համար նախատեսված 4,0 հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակության փոփոխության գործընթացները:

Մյուս 5 ներդրումային ծրագրերի մասով ընթանում են դրանց ֆինանսական գործիքների և մեխանիզմների աջակցության ուսումնասիրության գործընթացները: